2002, ՆՈՅԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 21 (137)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Մ Ա Մ Լ Ո   Հ Ա Ղ Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

### ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Երեք տարի առաջ՝ նոյեմբերի 4-ին, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցավ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց 132-րդ կաթողիկոսի օծման եւ գահակալության հանդիսավոր արարողությունը:*

*Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձը Մայրավանքում նշվեց կիրակի՝ նոյեմբերի 3-ին՝ Սբ. Պատարագի ընթացքում՝ Հայաստանյայց Առաքելական եկեղեցու նվիրապետական աթոռների բարձրաստիճան եկեղեցականների, Հայաստանի եւ Սփյուռքի թեմակալ առաջնորդների, Մայր Աթոռի միաբանների, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների եւ բազմաթիվ հավատացյալների ներկայությամբ: Պատարագիչն էր տեր Խաժակ արք. Պարսամյանը: Տարեդարձի առիթով թեմակալ առաջնորդների եւ եպիսկոպոսաց դասի մասնակցությամբ Իջման Սբ. Սեղանի առջեւ կատարվեց հայրապետական մաղթանք, ապա Խաժակ սրբազանն անդրադարձավ Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության երեք տարվա գործունեությանը՝ մասնավորապես կարեւորելով եկեղեցաշինության եւ հոգեւորականության նոր սերնդի պատրաստման ոլորտներում արձանագրված իրագործումները:*



*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալության երրորդ տարեդարձի առիթով Նորին Սրբությանը շնորհավորական եւ բարեմաղթանքի իրենց խոսքերն են փոխանցել քույր եկեղեցիների առաջնորդներ, Հայ եկեղեցու նվիրապետական աթոռների գահակալներ, Մայր Աթոռի միաբաններ, պետականություն, ինչպես նաեւ գիտության եւ մշակույթի գործիչներ:*

*Հայրապետական մաղթանքի ընթացքում, Հռոմի Կաթոլիկ եկեղեցու պետ Հովհաննես Պողոս Բ պապի շնորհավորական գիրն Ամենայն Հայոց կաթողիկոսին հանձնեց Անդրկովկասյան երկրներում պապական նվիրակ եպիսկոպոս Կլաուդիո Գուջերոտտին:*

### Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական նիստ՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Նոյեմբերի 1-2-ը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական ժողովը:

Մասնավոր ուշադրությամբ քննության առնվեց Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700-ամյակի տոնակատարությունների ծրագիրը: Ժողովի անդամները հավանության արժանացրին Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի ատենապետությամբ գործող 1700-ամյակի տոնակատարության կազմակերպման հանձնախմբի գործունեությունը՝ միաժամանակ թելադրելով, որ ծրագրված հանդիսությունների ու միջոցառումների ժամանակացույցը ներկայացվի ԳՀԽ հաջորդ ժողովին: Տոնակատարությունների շրջանակներում նախատեսված են ուխտագնացություններ, երիտասարդական եւ թեմական ներկայացուցչական հավաքներ, Ս. Էջմիածնին նվիրված գիտաժողովներ, հրատարակություններ եւ այլն:

Գերագույն հոգեւոր խորհուրդը քննարկեց նաեւ եկեղեցական կյանքի վերակազմակերպմանը վերաբերող հարցեր: Խորհրդի անդամները Մայր Աթոռի առաքելության արդյունավետության բարձրացման համատեքստում կարեւորեցին ծխական համայնքների կազմավորման, եկեղեցական նոր սերնդի պատրաստության, համայնքներում հայորդյաց տների համակարգի ստեղծման, եկեղեցական շինարարության, սոցիալական ծրագրերի իրականացման եւ այլ ոլորտներում իրականացվող աշխատանքների ընդլայնումն ու աշխուժացումը:

Գերագույն հոգեւոր խորհուրդը գոհունակությամբ լսեց նաեւ ժողովին հրավիրված «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն պրն. Վահան Տեր-Ղեւոնդյանի զեկույցը, որում հանգամանալից ներկայացվեց հիմնադրամի գործունեությունը: Ժողո-



վականները, մեծապես գնահատելով, կարեւորեցին իրականացվող աշխատանքները եւ վերահաստատեցին հիմնադրամի հայրենաշեն առաքելությանն աջակցելու իրենց պատրաստակամությունը:

Ժողովում քննարկվեցին նաեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու վարչակազմակերպչական կյանքին առնչվող խնդիրներ: Տեղեկացվեց նաեւ Նորին Սրբության՝ նոյեմբերի 10-28-ը Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմ կատարելիք հովվապետական այցի մասին:

Գերագույն խորհրդի անդամները ժողովի ավարտին իրենց շնորհավորանքներն ու բարեմաղթանքները հղեցին Նորին Սրբությանը՝ գահակալության երրորդ տարեդարձի առիթով: Ժողովը փակվեց գոհաբանական աղոթքով:

### Ուելսի ազգային ժողովում

2002 թ. հոկտեմբերի 30-ին՝ չորեքշաբթի օրը, Ուելսի Ազգային ժողովը ձայների մեծամասնությամբ ճանաչեց հայոց ցեղասպանությունը եւ ընդունեց «Տեսակետի հայտարարություն», որով կոչ է արվում Թուրքիային՝ իր ճակատից սրբելու սեփական պատմության սեւ բիծը: Ուելսի Ազգային ժողովը Միացյալ Թագավորության մեջ առաջին օրենսդիր մարմինն է, որ արտահայտեց իր համընդհանուր վերաբերմունքը հայոց ցեղասպանության հանդեպ: Դոկտոր Ռիչարդ Էդվարդսը (Աշխատավորական կուսակցություն), պրն. Սինոգ Դեյֆիսը (Փլադ Սիմրու) եւ տիկին Կիրսթի Ուիլիամսը (լիբերալ դեմոկրատ) ժողովի այն երեք անդամներն են, ովքեր բարձրացրին այս հարցը, տարան կազմակերպչական ու տեղեկատվական մեծ աշխատանք՝ լուսաբանելով 20-րդ դարի արշալույսին Օսմանյան կայսրությունում կատարված հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման անհերքելի փաստերը: Նույն օրը Քարդիֆում՝ Ուելսի Ազգային ժողովում, տեղի ունեցավ պառլամենտականների ու հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների հանդիպում: Այս միջոցառմանը, որպես Ամենայն Հայոց կաթողիկոսի ներկայացուցիչ, մասնակցեց նաեւ Անգլիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Նաթան եպս. Հովհաննիսյանը: Նա Ուելսի ազգային ժողովին փոխանցեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի երախտիքի խոսքը:

### Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմ

Նոյեմբերի 10-ին՝ վաղ առավոտյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն անդրանիկ հովվապետական այցով մեկնեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմ:

Նոյեմբերի 11-13-ը Վեհափառ Հայրապետը կլինի Բանգկոկում (Թաիլանդ): Այստեղից Նորին Սրբությունը կմեկնի Ավստրալիա, ուր կայցելի հայաշատ Սիդնեյ եւ Մելբուրն քաղաքներ: Ամենայն Հայոց Հայրապետի հովվապետական այցը կեզրափակվի Սինգապուրում՝ նոյեմբերի 27-28-ը:

Հովվապետական այցի ընթացքում Վեհափառ Հայրապետը պատարագներ կմատուցի տարբեր եկեղեցիներում, հանդիպումներ կունենա հայ համայնքի, ինչպես նաեւ պետական իշխանությունների հետ, էկումենիկ հանդիպումներ կունենա այլ եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

Վեհափառ Հայրապետին ուղեկցում են Վիրահայոց թեմի առաջնորդ տեր Վազգեն վրդ. Միրզախանյանը, ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանը եւ տեր Գեղարդ աբղ. Վահունին՝ իբրեւ գավազանակիր:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ Բ ԳԱԲԵՂՅԱՆ

## (557-574)

*Սկիզբը՝ նախորդ համարում*

Նեստորականները որպես վահան օգտագործում էին Քաղկեդոնի ժողովի ընդունած որոշումը՝ Քրիստոսի երկու բնության մասին, իսկ Հայոց եկեղեցին ստիպված էր ծանր պայմաններում պաշտպանել իր տեսակետը: Բավական է ծանոթանալ Հովհաննես Բ Գաբեղյանի հիշյալ թղթերին, որպեսզի պարզ դառնա, թե որքան աշալուրջ էր նա ազգային խնդիրներում, որքան էլ որ դրանք հանդես գային կրոնական եւ դավանաբանական գունավորումով:

Հովհաննես Բ կաթողիկոսի գործունեությունը բավարար չի լուսաբանված աղբյուրներում, ուստի ասվածին լոկ կարելի է ավելացնել, որ նրա անունով պահպանվել է «Ի Հայտնութիւն Քրիստոսի» վերտառությամբ մի քարոզ, ինչպես նաեւ վկայությունը նրա անհողդողդ կեցվածքի՝ կապված Երուսաղեմի հայ կրոնավորների խնդրի հետ: Երուսաղեմի 500 հայ կրոնավորներ եւ միայնակյացներ, հալածվելով հույն պատրիարքի կողմից՝ Քաղկեդոնի որոշումները չընդունելու համար, օգնության խնդրանքով դիմեցին հայոց կաթողիկոսին: Վերջինս նրանց կարգադրեց չանսալ կայսեր հրամանին, որով արգելվում էր հայ կրոնավորների բնակությունը Երուսաղեմում, եւ անհրաժեշտության դեպքում հեռանալ այդ քաղաքից: Շատ կրոնավորներ իրոք որ թողեցին սուրբ քաղաքը, սակայն հայ կրոնավորների մեծ մասը դիմացավ հալածանքներին եւ պահպանեց հայոց վանքերն ու դրանց պատկանող սուրբ վայրերը: Կաթողիկոսի հրամանով՝ հունարենից հայերեն թարգմանվեց «Էակաց Գիրքը»՝ 576 կամ 578 թվականին: Երբ ավարտվեց թարգմանության գործը, նա արդեն կնքել էր իր մահկանացուն:



Հովհաննես Բ Գաբեղյանի հովվապետությունը նշանավորվեց նաեւ մեկ այլ՝ Հայաստանի համար մեծ կարեւորություն ունեցող իրադարձությամբ: Սուրեն մարզպանը, եթե հավատանք աղբյուրներին, Խոսրով Անուշիրվանից հրահանգ էր ստացել շարունակել նախորդ մարզպանների հաշտարար քաղաքականությունը, սակայն, որքան էլ տարօրինակ էր, չնայած եղած բազմաթիվ զանգատներին՝ որեւէ քայլ չէր ձեռնարկում՝ նրան պաշտոնից հեռացնելու ուղղությամբ: Ուստի կարելի է ենթադրել, որ իրականում Հայաստանի, այսինքն՝ Պարսկահայաստանի քաղաքական-հասարակական կյանքը պղտորելու եւ զրադաշտականությունը տարածելու նրա քայլերն ամենից առաջ պարսից արքաների եւ արքայից արքայի հրահանգների կենսագործմանն էին ուղղված: Մտածել, թե Խոսրով Անուշիրվանը տեղյակ չէր մարզպանի կողմից իրականացվող հարստահարություններին, բռնություններին եւ կրոնական անհանդուրժողականությանը, միամտություն է, հետեւաբար պարսից արքան մի կողմից կամենում էր բարի եւ ժողովրդի մասին մտածող թագավորի համբավ ձեռք բերել, իսկ մյուս կողմից՝ մարզպանի իրականացրած հակահայկական քաղաքականությունը մատուցել որպես հակառակ իր կամքին կատարվող քայլեր: Չլիներ պարսից արքայի հրահանգը կամ նվազագույնը՝ լռելյայն համաձայնությունը, Սուրեն մարզպանն իր արարքների համար ամենախիստ պատիժների կենթարկվեր եւ անգամ մահվան կդատապարտվեր:

Հակառակ պարսից արքունիքի պատվելիքների՝ Սուրեն մարզպանի ձեռնարկումները միանգամայն այլ արդյունք տվեցին: Դժգոհությունը գնալով ուժեղանում էր ժողովրդական լայն զանգվածներում՝ պատրաստ ամեն րոպե վերածվելու համաժողովրդական ապստամբության, որի հնարավորությունը, դատելով ամեն ինչից, արքունիքն աննշան էր համարում: Դեպքերն ու իրադարձություններն արագացնելու եկավ Վարդ մարզպանի թոռ Մանվել Մամիկոնյանի սպանությունը, որը տեղի ունեցավ Խոսրով Անուշիրվանի գահակալության 41-րդ տարում՝ 571 թ. փետրվարի 23-ին՝ ըստ շարժական տոմարի: Իրենց տոհմակցի սպանությունը լցրեց Մամիկոնյան իշխանազունների համբերության բաժակը, որոնց մեջ աչքի էր ընկնում սպանվածի եղբայրը՝ Վարդան Մամիկոնյանը, որին, մեզ անհայտ պատճառներով, որոշ ուսումնասիրողներ հակված են նույնացնելու Կարմիր Վարդանի հետ: Իրականում Սեբեոսի հիշատակած Կարմիր Վարդանը նույնական է Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան Մամիկոնյանին, քանի որ, պատմիչի խոսքերով, նա գործել էր պարսից Հազկերտ թագավորի օրոք:

Վարդան Մամիկոնյանը դիմեց բացահայտ ապստամբության: Նրա զինվառ գնդերն անակնկալի բերեցին Սուրեն մարզպանին, առավել եւս, որ պարսկական տիրապետությունից դժգոհ տարրերը հավաքվում էին նրա շուրջը: Շուտով ապստամբական ուժերի թիվն անցավ 20 հազար հեծյալ ու հետեւակ մարտիկներից:

Այս ուժերի գլուխ անցած՝ Վարդան Մամիկոնյանը հարձակվեց մարզպանի զորամասերի վրա, որի հետեւանքով Սուրենը սպանվեց, իսկ նրա զորախմբի մնացորդները երկրից դուրս քշվեցին: Կամենալով ձեռք բերել բյուզանդական կայսեր աջակցությունը՝ Վարդան Մամիկոնյանը սպանված մարզպանի գլուխն ուղարկեց Թեոդոսուպոլիս՝ Բյուզանդական արեւելյան բանակի հրամանատար Հուստինիանոսին: Բյուզանդական արքունիքը, խիստ շահագրգռված լինելով հայկական ապստամբության հաջողության մեջ, ի դեմս կայսեր՝ պատրաստակամություն հայտնեց օգնելու հայերին եւ օգնական զորքեր ուղարկեց Արեւելյան Հայաստան: Հայ ապստամբները, հիշյալ զորքերի հետ մեկտեղ, արշավեցին Դվին եւ պաշարելով այն՝ շատ չանցած գրավեցին Հայաստանի միջնադարյան հռչակավոր մայրաքաղաքը: Պարսկական կայազորը ստիպված եղավ տեղի տալ եւ հայերի ու օգնության եկած հույների ճնշման տակ նահանջել Պարսկաստան:

Պարսկական 15-հազարանոց զորքը ջախջախված էր, սակայն դա չէր նշանակում, թե Հայաստանը չի դառնա պարսկական նոր բանակների ներխուժման ասպարեզ: Դեռ մինչեւ ապստամբությունը կնքված հայ-բյուզանդական պայմանագրով՝ կայսրությունը պարտավորվել էր հայերին ռազմական օգնություն ցույց տալ Պարսկաստանի դեմ մղվող պայքարում, սակայն այժմ, երբ բյուզանդական ուժերը հայ ապստամբների հետ մեկտեղ կռվել էին պարսկական զորքերի դեմ եւ անխուսափելի դարձրել երկու երկրների միջեւ պատերազմը, պարզվեց, որ կայսրությունը պատրաստ չէ մեծ պատերազմ մղելու:

*Շարունակությունը՝ էջ 6*

# ՀՐԵԱ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԸ ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՐԿՈՒՄ

*Հայ եկեղեցու պատմությունից հայտնի են փաստեր, երբ օտար ժողովուրդների ներկայացուցիչներ ցանկություն են հայտնել կամովի ընդունելու հայոց դավանանքը: Այդ առնչությամբ ուշագրավ երեւույթ էր 1910-1915 թվականներին Ռուսաստանում բնակվող հրեաների մկրտությունը Հայ եկեղեցու ծեսով: Ըստ ակադեմիկոս Վ. Միքայելյանի՝ այդ իրողությունը «հայ ընթերցողին (եւ ոչ միայն նրան) այսօր կարող է տարօրինակ եւ անգամ անհավատալի թվալ»: Մինչդեռ այդ տարիներին իսկապես զգալի թվով հրեաներ, տարբեր դրդապատճառներով, դիմում էին հայ հոգեւոր հաստատություններին ու իշխանության մարմիններին՝ խնդրելով թույլատրել հրաժարվել հրեական կրոնից եւ ընդունել քրիստոնեություն՝ հատկապես հայկական ծիսակարգով: Այդ մասին վկայում են Ռուսաստանի կենտրոնական պետական պատմական արխիվում պահվող բազմաթիվ նյութերը, որոնք ժամանակին հայտնաբերել ու ընտրողաբար առանձին հավելվածի կազմում հրատարակել է Վ. Միքայելյանը («Ինչու եւ ինչպես էին ռուսական հրեաներն ընդունում քրիստոնեություն՝ հայկական ծեսով (1910-1915 թթ.)», Երեւան, 1999 թ. ռուս.):*

*Ընտրված փաստաթղթերը եւ ներածական հոդվածը որոշակի պատկերացում են տալիս այդ հետաքրքրաշարժ իրողության առանձին մանրամասների, դրդապատճառների եւ հարակից հարցերի վերաբերյալ:*

*Հրեաների՝ հայկական ծեսով մկրտվելու փաստը նորություն չէր, քանզի միջնադարից հայտնի են դեպքեր, երբ առանձին անհատներ կամ ընտանիքներ քրիստոնյա են դարձել հայ հոգեւորականների ձեռքով: Այսպես. Սիմեոն Սքանչելագործը, Անտոնի Մակար եպիսկոպոսը, Մեծավոր Արեւելքում եւ Եվրոպայում քարոզչական գործունեություն իրականացնելիս, մկրտում էին նաեւ հրեաների: Սակայն 20-րդ դարի սկզբներին հիշյալ իրողությունն առանձնանում էր մկրտվել ցանկացողների համեմատաբար մեծ թվով, որոնք ներկայացնում էին հրեական հասարակության տարբեր խավեր՝ սկսած քաղքենիներից մինչեւ պատվավոր քաղաքացիներ: Նրանք ապրում էին կայսրության ամենատարբեր վայրերում՝ Օդեսայում, Խարկովում, Թեոդոսիայում, Բաքվում, Մոսկվայում, Աստրախանում, Սամարղանդում եւ այլուր:*

*Երեւույթը պայմանավորված էր մի շարք դրդապատճառներով, այդ թվում՝ ցարական Ռուսաստանի ներքաղաքական կյանքի լարվածությամբ, որի դրսեւորումներից մեկն էլ 19-րդ դարի վերջերին եւ 20-րդ դարի սկզբներին ծավալված հակասեմիտիզմն էր: Այն իր բարձրակետին հասավ 1910-ական թվականներին, երբ իշխանությունները, օգտագործելով սեւհարյուրակային ուժերը, սաստկացրին հալածանքները հրեաների նկատմամբ: Կազմակերպվեցին ջարդեր, երկրում մեծ աղմուկ հանեց Կիեւում բորբոքված «Բեյլիսի գործը»: Մշտական հետապնդումների, վիրավորանքների սարսափը շատերին հարկադրում էին, անվտանգության նկատառումներով, հեռանալ իրենց կրոնից եւ ընդունել քրիստոնեություն: Ընդ որում՝ ռուսական ուղղափառ դավանանքին հարելը հրեային չէր փրկում վտանգից, մինչդեռ ընդունելով հայ լուսավորչական դավանանքը՝ նա՝ իբրեւ արեւելյան ժողովրդի ներկայացուցիչ, հայերի ընդհանուր զանգվածի մեջ ձեռք էր բերում համեմատաբար ապահով վիճակ: Հայ եկեղեցու ծեսով մկրտվելու՝ հրեաների ցանկությունն ուներ նաեւ այլ պատճառներ, հետեւաբար մեր եկեղեցին միայն նրանց ֆիզիկական անվտանգությունն ապահովող ապաստարան չէր, այլեւ հոգեւոր սպեղանի, որի կարիքն ունի յուրաքանչյուր ոք: Փաստաթղթերից երեւում է, որ դավանափոխության հարցում երբեմն կարեւոր դեր է խաղացել ոմանց անկեղծ ցանկությունը: Խարկովի բնակիչ Մ. Բրոդսկին 1911 թ. մայիսի 2-ին հայ լուսավորչական եկեղեցու Նոր Նախիջեւանի-Բեսարաբիայի թեմական կոնսիստորիային հասցեագրած խնդրագրում նշում է, որ վաղ տարիքից ապրելով քրիստոնյաների շրջապատում՝ շփվել է նրանց հետ, ծանոթացել քրիստոնեական կրոնին, որն իր վրա «մշտապես.... թողել է հաճելի տպավորություն»: Այդ հանգամանքը Բրոդսկուն մղում է ուսումնասիրելու քրիստոնեական ուսմունքի էությունը եւ ընդունելու վճռական որոշում: «Լուրջ մտորումներից հետո,- գրում է նա,- ես հանգեցի այն հետեւության, որ քրիստոնեությունը քարոզում է հումանիստական վեհ սկզբունքներ՝ պատվիրելով սիրել մերձավորին», հետեւաբար «ես հաստատ որոշում ընդունեցի դավանել քրիստոնեական կրոնը»: Այնուհետեւ նա «խոնարհաբար» խնդրում է միջնորդել ներքին գործերի նախարարի առջեւ, որպեսզի իրեն թույլատրվի մկրտվելու Խարկովի հայոց եկեղեցում» (նշված աշխ. էջ 28-29):*



Գործ՝ Գ. Յակուլովի

*Իրենց որոշումը քրիստոնեական կրոնի մարդասիրական բնույթով էին բացատրում նաեւ Սողոմոն եւ Ռախիլա Բրոդսկիները, Մեեր Խալեւսկին, Ելիզավետա Խալիֆը եւ ուրիշներ: Վերջինս, ընդգծելով քրիստոնեական հավատի «առավելությունն ու ճշմարտացիությունը, միաժամանակ ցանկություն է հայտնում հրեական կրոնից անցնելու հայ գրիգորյան եկեղեցու գիրկը եւ քրիստոնեությունն ընդունելու հայոց դավանանքի սկզբունքներով:*

*Հրեաների մկրտությունն իրականացվում էր խիստ կանոնակարգված կերպով՝ ներքին գործերի նախարարության կառուցվածքում գործող օտար դավանության հոգեւոր գործերի դեպարտամենտի թույլտվությամբ, որին էլ հղվում էին Հայ եկեղեցու թեմերի միջնորդագրերը:*

*Շարունակությունը՝ էջ 7*

# ԱՆԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՍՏԾՈՒ...



«Արդարը հավատից է ապրելու»,- ասում է առաքյալը, արդարը, որի համար այնքա՜ն դժվար է ապրել այս անարդար աշխարհում: Առ Աստված ունեցած հավատն ու հույսն են միայն արդարին սփոփում, Աստված է, որ հորդորում է լինել համբերող, աշխարհի անարդարություններին դիմակայող ու երբեք չհուսալքվող: Քանզի մեր Տերն ի սկզբանե ասաց Իր աշակերտներին. «... այս աշխարհից չեք, այլ ես ձեզ ընտրեցի աշխարհից, դրա համար աշխարհը ձեզ ատում է» (Հովհ. ԺԵ 19): Աստծու ընտրյալների՝ ճշմարիտ քրիստոնյաների, արդար կյանքով ապրողների համար այս աշխարհում ապրելը փորձություն է: Սուրբ Գր. Տաթեւացին այս կյանքն անվանում է նահատակության ասպարեզ, որտեղ կարելի է շահել հաղթանակը միայն համբերությամբ: Այո՛, անարդար է աշխարհը, անարդար են մարդիկ: Բայց արդար, հզոր եւ համբերատար դատավոր է Աստված եւ յուրաքանչյուրիս հատուցելու է վերջին օրը՝ ըստ մեր գործերի: Աստծո ամենատես աչքից ոչինչ չի թաքնվում: Աստված է, որ քննում է մարդու սիրտն ու երիկամները: Աստված ամենուր է:

Սիրելի՛ ընթերցող, քեզ հետ անարդա՞ր են վարվել, մինչդեռ անարդար կերպով հանդիմանվում ես չգործած մեղքերի ու սխալների համար, եւ չկա մեկը, որ քեզ հավատա, արդարացնի, օգնի: Մի՛ հուսալքվիր: Աստվա՛ծ է քեզ հետ: Նա՛ է քո օգնականը: Ապավինիր Նրան, եւ Նա կարդարացնի քեզ, քանի որ «Տիրոջ աչքերն ուղղված են արդարներին, իսկ ականջները՝ նրանց աղոթքին» (Սաղմոս ԼԳ 16): Զինվի՛ր համբերությամբ: Անարդարության դեմ կարելի է պայքարել միայն արդարություն գործելով, չընկճվելով, թեկուզ եւ մեր նկատմամբ անարդար վարվողները հանգիստ վայելում են կյանքը, հիշենք, որ «Կան մարդիկ, որոնց մեղքերը հայտնի են նախքան որեւէ դատաստանի ենթարկվելը. մարդիկ էլ կան, որոնց մեղքերը հետո են հայտնի դառնում» (Ա Տիմոթ. Ե 24):

Մեր աչքի առջեւ միշտ ունենանք մեր Տեր Հիսուս Քրիստոսի կրած տառապանքները. Նա Իր չգործած մեղքերի համար խաչելության դատապարտվեց անօրեն ամբոխի կողմից, սակայն հոժարությամբ հանձն առավ խաչի անարգ մահը, անօրեններիս պատճառով մեռավ Ինքը՝ Արդարությունը, առանց պատճառի ատվեց Ինքը՝ Քաղցրությունը, բայց համբերեց: Այդ պատճառով է, որ հայրերը հորդորում են. «Նախ նայիր Քրիստոսի նեղություններին եւ ավելի դյուրին կկրես քոնը»: Անհնար է ապրել այս անարդար աշխարհում բարեպաշտ կյանքով եւ չհալածվել անարդարների ու անօրենների կողմից, որովհետեւ Տերն ասում է. «Եթե Ինձ հալածեցին, ապա ձեզ էլ կհալածեն»: Ուստի լսում է արդարների աղաղակը, օգնության է հասնում եւ՛ այս աշխարհում, եւ՛ հանդերձյալում՝ բյուրապատիկ հատուցելով. «Արդարները ոչ միայն հանդերձյալ կյանքում, այլեւ այստեղ բարի հրեշտակներին ընկերակից եւ հաղորդակից են լինում: Իսկ մեղավորները այստեղ եւ հանդերձյալում պիտի տանջվեն եւ դեւերի հետ դատապարտվեն այն կրքերի պատճառով, որոնց սիրեցին» (Ընդհանրական վարդապետներ): Ուրեմն առավել, որպես ճշմարիտ քրիստոնյաներ, խղճալով մեր նկատմամբ անարդար վարվողներին՝ պարտավոր ենք նրանց համար աղոթել, որպեսզի ամենագութ Աստված ների նրանց, որովհետեւ «չգիտեն, թե ինչ են անում»: Ավելին. «Առանց սրի ու հրի կարող ենք մարտիրոսանալ, եթե համբերենք այլոց չարությանը»: Իսկ առաքյալը գրում է. «Ինքներդ վրեժխնդիր մի՛ եղեք, սիրելինե՛ր, այլ թո՛ւյլ տվեք, որ Աստծու բարկությունը կատարի այն, որովհետեւ գրված է. «Իմն է վրեժխնդրությունը, եւ ես կհատուցեմ»,- ասում է Տերը» (Հռոմ. ԺԲ 19): Ուստի «Տերը նրանց պիտի հատուցի իրենց անօրենության համեմատ, իրենց չարության համեմատ պիտի կործանի նրանց»,- ասում է սաղմոսերգուն, նրանք, ովքեր ճշմարտության դեմ ապստամբողներ ու անիրավության հետեւից գնացողներ են, նախատինք ու անարգանք պիտի կրեն, պիտի խայտառակվեն ու ամոթով մնան ամեն արդարին հասցրած չարիքների համար, քանզի արդարի Տերն Աստված է եւ արդարացնում է՝ ըստ Իր արդարության:

Ապավինենք արդարադատ Աստծուն, երկյուղենք Նրա արդար դատաստանից, լցվենք բարությամբ, աղոթենք մեր նկատմամբ չարիք գործողների համար՝ հաղթելով նրանց մեր քաղցրությամբ, «քանի որ այդպիսով լայնորեն մուտք պիտի շնորհվի ձեզ դեպի մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հավիտենական արքայությունը» (Բ Պետ. Ա 11). ամեն:

*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ԿՐՈՆ եվ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Անժխտելի է կրոնի դաստիարակչական դերը աճող սերնդի ձեւավորման գործում: Հայոց Առաքելական եկեղեցին դարեր շարունակ իր առաջնահերթ խնդիրներից է համարել բարեպաշտ եւ ազգասեր երիտասարդության դաստիարակությունը:

Մեր օրերում ավելի է կարեւորվում առաքելական-քրիստոնեական դաստիարակության նշանակությունը, քանի որ ակտիվացել է զազրելի հոգեորսությունը՝ հատկապես երիտասարդության շրջանում:



Առաջնորդվելով մեր սուրբ նախնիների ոգով եւ քրիստոնեական ճշմարտացի լույսով՝ Էջմիածին քաղաքի «Գրիգոր Լուսավորչի համալսարան» կրթահամալիրի ղեկավարությունը, համագործակցելով Փառեն սրբազանի հետ, երիտասարդությանը դաստիարակելու մտահոգությամբ՝ բաց դաս կազմակերպեց Վեհարանի նվիրական համալիրում:

Համալսարանի «Գայանյան օրհներգ քոլեջի» սանուհիներին ընդունեց տեր Ասողիկը: Նա հյուրընկալվող օրհներգներին առաջնորդեց «Գանձատուն», որտեղ պահվում են հայ քրիստոնյաների համար կարեւոր արժեք ներկայացնող մասունքները: Տեր Ասողիկը սանուհիներին ներկայացրեց ցուցադրվող իրերը, բացատրեց դրանց նշանակությունը: Բացատրություններից հետո կիրառական արվեստի այդ արժեքավոր նմուշները ուսանողուհիների համար դադարում էին լոկ ոսկի, արծաթ կամ նկարչական կտավներ լինելուց: Այդ ամենն աստիճանաբար վերածվում էր հարազատ ժողովրդի հոգեւոր արժեքները մարմնավորող անկրկնելի մասունքների: Եվ արդեն չէր քննարկվում այն հարցը, թե աշխարհի յուրաքանչյուր թանգարան էլ իրեն պատիվ պիտի համարեր նման ցուցանմուշներ ունենալը: Գայանյան վարժարանի սանուհիներն աստիճանաբար լցվում էին հպարտության մի անկրկնելի զգացումով, նրանք նորովի էին գիտակցում, որ այդ «Գանձատունը» եզակի է ոչ թե նյութականի պարունակությամբ, այլեւ մարդ արարածի՝ առ Աստված տածվող արարչական հավատի հոգեւոր անսահմանությամբ:

Աստիճանաբար անհետացավ օրհներգների եւ քահանայի միջեւ առկա փխրուն պաշտոնականությունը, եւ ծնունդ առավ անկաշկանդ, բարեկամական զրույցը:

Այնուհետեւ եկեղեցու սպասավորներից մեկը նրանց ուղեկցեց Մայր տաճար: Այնտեղ նրանք, դեռեւս իրենց տեսածի ու լսածի թարմ տպավորության տակ, մոմեր վառեցին եւ գուցե թե նորովի աղոթեցին առ Աստված:

«Գայանյան օրհներգ քոլեջի» ուսանողուհիները, եկեղեցու սպասավորներին շնորհակալություն հայտնելով, տուն էին վերադառնում՝ հոգիներում անսովոր թեթեւություն: Նրանցից յուրաքանչյուրի հոգում լույսի մի նոր շող էր ավելացել: Այդ լույսն անչափ պետք էր նրանց, քանզի մի գեղեցիկ օր նրանք դասարան պիտի մտնեն՝ կրթելու եւ դաստիարակելու հայ մանուկներին, եւ այդ հոգու քրիստոնեական լույսը, անկասկած, հայոց լեզվի հետ կպատգամեն նաեւ ազատասեր իրենց սաներին:

*Աշոտ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ՝ ՀԱՎՈՒՐ ՊԱՏՃԱՌԻ

Օրերս Արաբկիրի հայորդյաց տանը բացվել էր 7-15 տարեկան երեխաների նկարների ցուցահանդես՝ նվիրված Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օծման եւ գահակալության երրորդ տարեդարձին: Ցուցահանդեսը կազմակերպել էր Հայ Առաքելական եկեղեցու եւ ՀԲԸՄ հայորդյաց տների հոգեւոր տեսուչ տեր Խադ քհն. Ղազարյանը՝ Զինիչյան հիշատակի հիմնադրամի օժանդակությամբ:

Նախօրոք հայտարարված ցուցահանդես-մրցույթին կարող էին մասնակցել նկարելու ցանկություն ու ձիրք ունեցող բոլոր երեխաները: Հայտարարվել էին թեմաները. «Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգվույս», «Սերմնացանի առակը», «Անառակ որդու վերադարձը», «Ես իմ անուշ Հայաստանի», «Աշուն»: Շուրջ մեկ ամսվա ընթացքում Հայաստանի տարբեր մարզերից մանկական ստեղծագործություններն ընդունող հանձնաժողովին էր ներկայացվել 700-ից ավելի նկար, որից 140-ն էր արժանացել ցուցադրվելու պատվին:

Երեխաները նկարել էին Ամենայն Հայոց Հայրապետին, Հիսուսի ծնունդը, աշնանային տեսարաններ՝ հեռվում երեւացող եկեղեցիով, Նոյի տապանը, գյուղական պատկերներ, նատյուրմորտներ, մանրանկարչական դրվագներ Ավետարանից:

Մրցանակային տեղերն ինն էին, որոնց արժանացան երեխաներ ինչպես Երեւանից, այնպես էլ մարզերից: Զինիչյան հիշատակի հիմնադրամի կողմից մրցանակակիրներին շնորհվեցին պատվոգրեր եւ տրվեցին նվերներ՝ ոսկյա խաչեր, իսկ բոլոր մասնակիցներին՝ մանկական Աստվածաշունչ մատյաններ:

- Շատ դժվար էր ընտրություն կատարել լավի ու լավագույնի միջեւ,- հայտարարեց ՀՀ Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր Արամ Իսաբեկյանը:- Ես շատերի մեջ տեսա տաղանդի ծիլեր եւ այս առիթով շնորհավորում եմ բոլորիս:

- Կային յոթ տարեկան երեխաների գործեր, որոնց հեղինակները կարող էին լինել անգամ տասներկու տարեկան, եւ դա ուրախալի է: Երեխայի լույսի, գույնի, գծի ու մտածողության «սկզբունքը» արարչական է՝ ազատ ու անկաշկանդ,- ասաց գնահատող հանձնախմբի անդամ Արեւշատ Ավագյանը:- Ես ավելի շատ մրցանակներ կսահմանեի. մեկին՝ թեման ընկալելու, մյուսին՝ երեւակայության, երրորդին՝ բնականից նկարելու համար եւ այլն: Գովելի է, որ մեր երեխաներն ազդվում են հա՛յ մշակույթի մեծերից, սակայն նրանք պետք է կարողանան նաեւ ազատվել ընդօրինակման կնիքից:

Սպիտակից ժամանած մի ուսուցչուհի իր շնորհակալությունը հայտնեց՝ հավատալով, որ հոբելյանական այս ցուցահանդեսը «գույների տոն էր, որի պարգեւած հիշողությունները դեռ երկար կուղեկցեն ու կոգեւորեն երեխաներին»:

*Սուսաննա ՄԱՐԳԱՐՅԱՆ*

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՍՏԾՈ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ

*Սկիզբը՝ էջ 5*

Օրերից մի օր գալիս է մի հարբեցող թե խելագար եւ ծեծելով սպանում տան գլխավորին՝ առանց որեւէ պատճառի: Հետո Աստծուց հեռու մարդիկ ասում են. «Ահա նայիր սրան: Սա իր խաչն էր կրում եւ այդ պատճառով տուժեց...»: Մենք պետք է իմանանք, որ Աստված թույլ է տալիս մահանալ նաեւ միանգամայն անմեղ մարդկանց, որպեսզի հնարավորություն տա խիղճը անամոթներին ասելու այն, ինչ ասաց բարի ավազակն անպատկառ ավազակին. «Չե՞ս վախենում դու Աստծուց: Մենք արդարորեն ենք տառապում, իսկ այս մարդը ոչ մի վատ բան չի արել: Մի՞թե Աստծուց չես վախենում» (Ղուկ. ԻԳ 39-41):

Հանուն ողջ աշխարհի հանդեպ ողորմության՝ երեխաներն իրենց վրա են վերցնում նահատակության սխրանքը: Նրանք տիեզերական նշանակություն ունեցող խաչ են կրում: Աստված հաճույք չի ստանում, չի ուրախանում նրանց վշտերից, սակայն շնորհիվ նրանց՝ մեծերը դեռեւս ժամանակ են ունենում ապաշխարության: Ցավոք, չապաշխարելու, ինքնարդարացման եւ սեփական մեղքերի մասին չխորհելու սովորության պատճառով մարդիկ դա չեն զգում: Անմեղ երեխայի տառապանքն անգամ միշտ չէ, որ կոտրում, խոնարհեցնում է խիստ եւ եսասեր սիրտը:

*Շարունակելի*

*Թարգմ.՝ Գ. Վարդանյանի*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ ք. Վաղարշապատ, ՔԴԿ
հեռախոս՝ (0+31) 56780, 54510
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Տպագր. է տպագր. 15. 11. 2002 թ.
Տպաքանակը՝ 2500 Գինը՝ 50 դրամ